ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## 22.11.2019թ. ԿՆՔՎԱԾ N «ԳՀԱՊՁԲ-15/2-2019-2-ԴԲԳԳԿ-1» ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան «27» «11» 2019թ.

ՀՀ ԱՆ «Դատաբժշկական Գիտագործնական Կենտրոն» ՊՈԱԿ, ի դեմս տնօրեն Մ.Ս.Բիշարյանի և ԱՁ Շողիկ Մանասերյանը որը գործում է կանոնադրության հիման վրա մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, հիմք ընդունելով 22.11.2019թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-15/2-2019-2-ԴԲԳԳԿ-1 գնման պայմանագրի (Այսուհետև Պայմանագիր) 8.15 րդ կետը, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 18 րդ կետը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում վերոհիշյալ որոշման 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին N «ԳՀԱՊՁԲ-15/2-2019-2-ԴԲԳԳԿ-1» գնման պայմանագրի շրջանակներում հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց (վճարման ժամանակացույց) համաձայն կից հավելվածի:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է N «ԳՀԱՊՁԲ-15/2-2019-2-ԴԲԳԳԿ-1» գնման պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Ապրանքների մատակարարումն իրականացվելու է համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած միանվագ մինչև 15.12.2019թ.:

2.3 Սույն համաձայնագրում չնշված կողմերի գնման պայմանագրով նախատեսված մյուս կետերը, մնում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են 2 (երկու) էջից, կնքվում են հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱՆ «Դատաբժշկական Գիտագործնական Կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե ՀՀ, ք. Երևան, Մ.Հերացի 5/1
Գանձապետարան
h/h 900018001975
ՀՎՀՀ 00405431
Տնօրեն Մ.Ս.Բիշարյան

/ստորագրություն/

**ՎԱՃԱՌՈՂ**

ԱՁ «Շողիկ Մանասարյան»
Հասցե ք. Կոտայքի մարզ, ք.Հրազդան,
Պ.Դուրյանի փող. 12 շ.13 բն.
Բանկ ՎՏԲ Հայաստան Բանկ
Խորհրդային մ/ճ
Հ/Հ 16042132336300
ՀՎՀՀ 40549779
ԱՁ [illegible] Մանասարյան

/ստորագրություն/